ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտի 2023թ. թիվ 142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2023 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 122-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի կառուցվածքում՝

1) ֆինանսական վարչության կազմում դադարեցնել ֆինանսատնտեսագիտական բաժնի գործունեությունը.

2) քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կազմում ստեղծել հողաշինության բաժին.

3) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կազմում դադարեցնել գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների գործունեությունը.

4) կրթության, մշակույթի և սպորտի վարչության կազմում դադարեցնել կրթության և մշակույթի և սպորտի բաժինների գործունեությունը.

5) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության կազմում դադարեցնել տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժինների գործունեությունը.

6) անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կազմում ստեղծել անձնակազմի կառավարման և փաստաթղթաշրջանառության բաժիններ:»:

2. Սույն որոշումը տարածվում է 2023 թվականի մարտի 17-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

30/03/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. մարտի 29
ք.Վանաձոր